

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՂԹԵԼՈՒ Է*

Մաս առաջին

22.09.2020

Մեզանում քչերը նկատեցին այն իրողությունը, որ Սևրի պայմանագրի 100-ամյակի նախօրեին Հայաստանի Տավուշի մարզի սահմանագլխին խաղարկված հուլիսյան ռազմաքաղաքական հետևանքով մեր տարածաշրջանը ներառվեց ռուս-թուրքական տեղական նշանակության դիմակայությունների երկար շարքի մեջ, որոնք մեկ բորբոքվելու, մեկ մարելու նշաններ են ցույց տալիս Լիբիայում, Սիրիայում և այլ տարածաշրջաններում: Ուստի, փնտրելով «ո՞վ էր մեղավոր» հարցի պատասխանը, ոմանք մոռացան պարզել, թե ում էր ձեռնառու տեղի ունեցածը, քանզի դրանից ակնհայտ կդառնար, որ Տավուշում իր ռազմական անկարողությունը ցուցադրած Ադրբեջանը հինավորապես պատանդառվեց Թուրքիայի կողմից, իսկ թուրք-ադրբեջանական գորավարժություններով առարկայացած թուրքական սպառնալիքի հետևանքով մեզ էլ «իր թևի տակ առավ» Ռուսաստանը: Բայց երկուսիս «վախերը չափելուց» հետո այս ռազմաքաղաքական ներկայացման գույգ ռեժիսորները այդպես էլ չեն կարողանում գտնել այն «**Modus Vivendi**»-ն, որը նրանց անհրաժեշտ է լինելու 2021 թվականին նման գործարքների պատմական նախատիպը հանդիսացող Լենին-Աթաթուրք պակտը վերահաստատելու համար:

Ճակատագրի հեզնանքով հենց Սևրի պայմանագրի 100-ամյակի նախօրեին արձանագրված այս խորհրդանշական իրադարձությունը ցույց տվեց, որ կողմերը Հայաստանի շահերի հաշվին ևս մեկ գործարք կնքելու հնարավորություն չունեն: Պատճառն այն է, որ տեսականորեն դեռևս հնարավոր՝ Նախիջևանի գավթման դիմաց Բաքվում իշխանությունը Ալիևներից Փաշալաներին հանձնելու տարբերակը սոսկ «մխիթարական մրցանակ» է լինելու Ռուսաստանի համար, քանզի որևէ կերպ չի ազդելու ողջ Ադրբեջանի թուրքացման գործընթացի վրա: Հարավային Կովկասում Ռուսաստանի ու

* «Վեմ»-ի «Հայաստանը հաղթելու է» վերնագիրը կրող խմբագրականի առաջին մասը էջադրման է ուղարկվել պատերազմից ուղիղ 5 օր առաջ սեպտեմբերի 22-ին՝ ժամը 1:57-ին, ինչն ապացուցվում է մեր էլեկտրոնային քանկի «Sent» պատուհանից հանված «Tue, Sep 22 at 1:57 PM» տողով:

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) ցրարի, թիվ 3 (71), հուլիս-սեպտեմբեր, 2020

Թուրքիայի հարաբերությունների հիմքը կազմող Լենին-Աթաթուրք գործարքի կոռոզիայի պատճառով Ռուսաստանը ոչ թե չի ուզում, այլ այլևս **չի կարող** Հայաստանը մատուցել Թուրքիայի հետ իր նոր գործարքի գոհասեղանին, ինչ գին էլ առաջարկի վերջինս:

Դեռևս ընթացիկ տարվա սկզբին ենք նկատել, որ Սևրի պայմանագիրը չեզոքացնելու համար 100 տարի առաջ կնքված Լենին-Աթաթուրք գործարքով ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունները կազմաքանդվում են ոչ թե իրենց **սկզբից**, այլ **վերջից**¹: Եվ քանի որ տարածաշրջանի ներառումը Մեծ Մերձավոր Արևելքի մեջ արագացնում է կողմերի փոխադարձ հարաբերությունների դեգրադացումը, ԱՄՆ թվացյալ մեկուսացման խորապատկերին սկիզբ առած նման **կեղծ վերաբեռնավորումը** ցուցադրում է Թուրքիայի ու Ռուսաստանի կայսերական տեսլականների արխաիզմը:

Թուրքիան, փորձելով առաջ շարժվել Լիբիայում, Սիրիայում ու Արևելյան Միջերկրածովքում, տպավորություն է ստեղծում, թե վերականգնում է Օսմանյան կայսրությունը, բայց, փաստորեն, միջազգային հանրությանն ապացուցում է վերջինիս պատմական դատավճիռը՝ Սևրի պայմանագիրը գործադրելու անհրաժեշտությունը:

Ռուսաստանի ներկա դեկավարությունը, ցույց տալով, թե իբր այդ տարածաշրջանների մեծ մասում ու նաև Դրիմում ու Հարավային Կովկասում լրջորեն հակադրվում է Թուրքիայի ակտիվացմանը, իր հերթին պատրանք է ստեղծում, թե իբր վերագտնում է Արևելքի ժողովուրդների ազատարարի իր առաքելությունը, մինչդեռ, առանց նոր Սևրի, այն հնարավոր չէ իրականացնել, իսկ դրա համար պետք է խիզախություն ունենալ հրաժարվելու Լենին-Աթաթուրք գործարքից:

Պատճառն այն է, որ արտաքին ու ներքին ծանրագույն վիճակում հայտնված այս երկու մայրցամաքային տերությունների միջև պարբերաբար բեմականացվող **դինոզավրերի պատերազմներն** ընթանում են երկու հարթություններում: **Գլոբալ ուժերի** հետ հարաբերություններում նրանք նպատակ ունեն համատեղ ուժերով փակելու այն պանդորայի արկղը, որում պահվում է Մեծ Մերձավոր Արևելքի ապագա քարտեզը՝ Սևրի քարտեզը: Իսկ **տարածաշրջանային առումով**՝ Ռուսաստանն ու Թուրքիան թեև հնարավորության դեպքում փորձում են միմյանցից պոկել ավարի հնարավորինս մեծ բաժիններ, բայց վերջին պահին առաջինը գիշում է երկրորդին, որովհետև Մոսկվայում առկա վարչակարգը շարունակում է հիմնվել Արևմուտքի՝ բացարձակ չարիք լինելու կանխադրույթի վրա: Իսկ թուրքական կողմը նման բարդույթներ չունի, քանի որ առաջնորդվում է իր գոհերի միջև խտրություն չդնող լեշակեր գազանի բնագոյով:

¹ Տես Սևրի հետազոծող, Խմբագրական, «Վեմ», Եր., 2020, N 1:

Իրականում այս տարօրինակ «դիմակայությունները» գլոբալ մակարդակում արձանագրվող աշխարհաքաղաքական տեղաշարժերի տարածաշրջանային հետագծերին հակադրվելու անգոր փորձեր են: **Հարավում** ամերիկյան գորքերի դուրսբերումը Սիրիայից, Հունաստանի ու Եգիպտոսի մերձեցումը, Իսրայելի համար թուրքական վտանգի առարկայացումը, Արևելյան Միջերկրածովքում Ֆրանսիայի ակտիվացումը, իսրայելա-արաբական հարաբերությունների բարելավման միտումները մերձավորմիջինարևելյան տարածաշրջանի կոտորակման գործընթացի վկայություններն են: Իսկ **Հյուսիսում** «կոլեկտիվ Արևմուտքի» միասնականության արագ վերականգնումը՝ Բելառուսում տեղի ունեցող հեղափոխական ցնցումների խորապատկերին, տարվա գլխավոր իրադարձության՝ ԱՄՆ նախագահական ընտրությունների նախերգանքն է: Քանի որ դրանց թիրախային օբյեկտն է հարավում Թուրքիան, իսկ հյուսիսում՝ Ռուսաստանը, ուստի այս օբյեկտա-սուբյեկտային դերաբաշխումների բուն ռեժիսորներն առայժմ մնում են ստվերում: Իսկ նրանց տեղապահները՝ ի դեմս ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի, մի կողմից դիվանագիտորեն զսպում են օր առաջ Հունաստանին հարվածելու Ռ. Էրդոհանի մոլուցքը, իսկ մյուս կողմից մատների արանքով են նայում Թուրքիայի ախորժակի մեծացմանը Հարավային Կովկասում ու Կենտրոնական Ասիայում, այսինքն՝ այնտեղ, որտեղ գորշ գալիին կարելի է «քսի տալ» Ռուսաստանի, Իրանի և վերջում էլ Չինաստանի դեմ: Ավելին՝ վերջին երկուսի հանդեպ գործադրվող ձնշման մեծացումն արդեն իր արձագանքներն է գտել Իրանի Ատրպատականում, Միջին Ասիայում և անգամ Չինաստանի Ներքին Մոնոլոլիայում:

Պատճառն ակնհայտ է, որքան էլ Արևմուտքում տարակուսանք առաջացնեն և՛ Թրամփի, և՛ Պուտինի ընկերոջ **հակագլոբալիստական դափնիները** վաստակած Ռ. Էրդոհանի նոր օսմանյան նկրտումները, իրենց խորքում դրանք համընկնում են կերակրելու համար այլևս անպետք դարձած թուրքական գորշ գալիի ախորժակը դեպի Հյուսիս ու Արևելք ուղղորդելու ռազմավարությանը: Իսկ Թուրքիան օգտագործում է Արևմուտքի՝ որպես բացարձակ չարիքի մասին Ռուսաստանի ներկա ղեկավարության վախերը, որպեսզի ժամանակի ընթացքում հենց ինքը դառնա Արևմուտքից բխող տարածաշրջանային պատվերների կատարողը: Այդ պատճառով, երբ համեմատում ենք տավուշյան մարտերի ժամանակ հագիվ քնից արթնացած, իսկ արթնանալուց հետո էլ տեղի ունեցողն այդպես էլ խորությամբ չըմբռնած անփորձ լրագրողի կողմից առաջնորդվող Հայաստանի և որպես Թրամփի ու Պուտինի ընկեր՝ հակագլոբալիստական «խաղեր տվող» Թուրքիայի փորձառու ղեկավարի **աշխարհաքաղաքական ձեռնածության** մասշտաբները, ապա մտածում ենք, որ վաղն էլ արդեն որպես Զ. Սորոսի «հին ընկեր»՝ Ռ. Էրդոհանը կարող է բռնել Մեծ Թուրանի ձանապարհը: Տավուշում տեղի ունեցած վերջին իրա-

Վե՛մ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) ցարի, թիվ 3 (71), հուլիս-սեպտեմբեր, 2020

դարձություններից հետո թուրք-ադրբեջանական լոբբին արդեն փորձարկել է Ռուսաստանի ներսում առկա թուրք-իսլամական գործոնը, ուստի առաջիկա աշնան-ձմռան ամիսներին այդ երկրում սպասվող ներքաղաքական ցնցումների պայմաններում Թուրքիան կարող է Լենին-Աթաթուրք գործարքը երկարաձգելու ավելի ծանր պայմաններ առաջարկել Կրեմլին: Իսկ բարեկամության ժեստերով Մոսկվային ապակողմնորոշող Ադրբեջանի արագընթաց թուրքացումն ուղեկցվում է մի կողմից՝ պատերազմական նախապատրաստություններով, իսկ մյուս կողմից՝ Հայաստանը Վրաստանից ու Իրանից ևս շրջափակելու նպատակ ունեցող գործնական քայլերով: Ավելին՝ Ռուսաստանում քառսային իրավիճակ ստեղծվելու պարագայում Ադրբեջանի հետ միասին Թուրքիան կարող է անգամ բլից-կրիգ սկսել Հայաստանի ու Արցախի դեմ՝ Նախիջևան-Ջանգեզուրի հարավ գծով ձեռքում կազմակերպելու համար:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ առաջիկա ամիսներին ներքաղաքական ցնցումներ են սպասվում ինչպես գլոբալիստների ու նոր պահպանողականների մրցասպարեզի վերածված Միացյալ Նահանգներում, այնպես էլ օրեցօր ավելի ու ավելի հեղափոխականացող Ռուսաստանում, նման սցենարի հավանականությունը ամենևին էլ չի կարելի բացառել: Ավելին՝ ճակատագրի հեգնանքով 1917-ի նման այսօր էլ ռուսական **արջը** «գլոբալիստական հղիության» ավելի ակնհայտ նշաններ է ցույց տալիս, քան ամերիկյան դեմոկրատների խորհրդանիշ **ավանակը**: Որևէ կասկած չունենք, որ բարեհաջող «ծննդաբերության» դեպքում նրա արգանդում եղած **հեղափոխական քոթոթը** պատահ-պատահ է անելու թուրքական գորշ գայլին, բայց նա դեռ պետք է ծնվի ու հասունանա՝ կերպավորվելով որևէ կոնկրետ գործչի տեսքով: Իսկ մինչ այդ կարո՞ղ է արդյոք Հայաստանը դիմանալ այն աշխարհաքաղաքական վակուումի ահավոր ճնշմանը, որը սպասվում է մեր տարածաշրջանում:

Անշուշտ, Հարավային Կովկասում Հայաստանը գլոբալ տերությունների այն հենման կետն է, որն իր վրա է կրում մինչև Կասպիականի խորքերը և դրանից հյուսիս ու արևելք ձգվող տարածաշրջանների **անվտանգային հավասարակշռությունը**, բայց քանի որ ԱՄՆ-ում ու Ռուսաստանում սկսվող ներքաղաքական դիմակայությունները կարող են ուժի վակուում ստեղծել մեր տարածաշրջանում, մեզ անհրաժեշտ են այդ հավասարակշռության պահպանման միանգամից մի քանի սցենարներ: Որովհետև աշխարհաքաղաքական տեղաշարժերի ժամանակ թույլերին հոշոտելու մեծ փորձ ունեցող թուրքական գորշ գայլը նույնպես սպասում է Ռուսաստանում 1917 թվականը հիշեցնող որևէ սցենարի կրկնությանը: Ուստի գիտակցելով, որ «կոլեկտիվ Արևմուտքը», Ա. Նավալնիի թունավորման պատմությունը խաղարկելով, նպատակ ունի ներսից ցնցելու Ռուսաստանը,

Թուրքիան փորձում է ստանձնել նրա շրջափակման հարավային օղակի գործառույթները: Այսինքն՝ Արևմուտքում դիմադրության հանդիպելուց հետո Արևելքում Ռ. Էրդողանը ցանկանում է ստանալ այն նույն աշխարհաքաղաքական պատվերը, որն այսօր ունեն Մերձբալթյան երկրները, Լեհաստանն ու Ուկրաինան: Ուստի մեզ համար այս խիստ վտանգավոր հեռանկարի առարկայացումը կախված է իրենց վճռական հանգրվանը մտած ԱՄՆ-ի և Ռուսաստանի ներքաղաքական վերադասավորումների կառավարելիության աստիճանից:

Բարեբախտաբար, ատոմային տերություն հանդիսացող Ռուսաստանի քառսային փլուզման սցենարը շատ ավելի մեծ ռիսկեր է պարունակում Արևմուտքի համար, քան Կրեմլում իր մարդուն տեղակայելու միջոցով նրան գլոբալիստների հարվածային ուժը դարձնելու տարբերակը: Ռուսաստանի անկառավարելի փլուզումը հանգեցնելու է աշխարհի հանքահումքային հիմնական բազայի՝ Սիբիրի չինական կլանմանը, ինչը ոչ Արևմուտքը կարող է խոչընդոտել և ոչ էլ բազմապատիկ ավելի թույլ Թուրքիան: Այդ խնդիրը կարող է լուծել միայն Եվրասիայի ամենաազդեցունակ ազգը՝ **ռուս ազգը**, որն այսօր արթնացել է լեթարգիական քնից: Ավելին, ի տարբերություն 1917 թվականի, ժամանակակից տեխնիկական միջոցների առկայության պայմաններում ավելորդ է անգամ խոսել Թուրքիայի երրորդ դաշտային բանակի՝ Հայաստանում ռուսական ռազմահանգրվանի համեմատ ունեցած քանակական առավելության կամ, ինչպես նախկինում էինք ասում, բրիտանական նավերի՝ Արարատ բարձրանալու անկարողության մասին:

Ուրեմն բուն խնդիրն այն է, որ կարողանանք մեր մեջ ուժ գտնել՝ խորպես գիտակցելու այն իրողությունը, որ մեր անվտանգության բանալիներն այսօր մեր ձեռքերում են: Հայաստանի ինքնիշխանության վերականգնումով գերտերությունների շահերի միջև ներկայումս ստեղծված փխրուն հավասարակշռությունը, անգամ ԱՄՆ-ում ու Ռուսաստանում հնարավոր ներքաղաքական կատակլիզմների պայմաններում, թույլ կտա չեզոքացնել թուրք-ադրբեջանական բլից-կրիգի բոլոր հնարավորությունները: Որովհետև 1917 թվականին դա հնարավոր դարձավ Ռուսաստանի՝ որպես պետության անկառավարելի փլուզման պատճառով: Մինչդեռ մեր հետտավուշյան ներկայությունը Ռուսաստանի կողմից ձևավորված **հարավային վահանի** շրջագծում կրեմլյան կամքի կենտրոնի պարալիզացման պայմաններում անգամ ի վիճակի է միջուկային հակահարված տալու տարածաշրջան ներխուժող թուրքական բանակին: Իսկ ահա Ֆրանսիայի հովանու ներքո ձևավորված Արևելյան Միջերկրածովքի երկրների հակաթուրք կոալիցիան հարկ եղած դեպքում կարող է երկրորդ ճակատի դեր խաղալ մեզ համար, եթե իր թիկունքին զգա Միացյալ Նահանգների օդատիեզերական ուժերի շունչը:

Անգամ ԱՄՆ-ում և Ռուսաստանում համաժամանակյա ներքաղաքական ցնցումների պայմաններում ժամանակավորապես կարելի է ինքնուրույնաբար կատեցնել թուրք-ադրբեջանական արցանի՝ Նախիջևան-Սյունիք գծով բացվելու փորձը, եթե Հայաստանի հասուն տարիքի ողջ բնակչության բանակային կամ աշխարհագրային ծառայությունն ապահովելով անցնենք շրջանաձև պաշտպանության և հուսալիորեն պահպանենք երկրի արտաքին ելքերը: Ուրեմն առաջիկա ամիսների մեր գլխավոր խնդիրը գերտերությունների շահերի միջև փխրուն հավասարակշռության պահպանումն է՝ երբեք չտրվելով նրանցից որևէ մեկին ապավինելու **ներքաղաքական գայթակղությանը**: Որովհետև մեր սեղմված մարմինը գլոբալ խաղի այն **պրկված զսպանակն** է, որի դիմադրական հնարավորությունների գործարկման պարագայում Թուրքիան ու Ադրբեջանը չեն կարող մեզ կոտրել, եթե անգամ ոչնչացնեն Հայաստանի բնակչության մի մասը: Գլոբալ խաղից դուրս չգալու պարագայում **Հայաստանը հաղթելու է** ցանկացած տարբերակում՝ կանխելով ինչպես Լենին-Աթաթուրք նոր գործարքի հավանականությունը, այնպես էլ արևմտյան որոշակի ուժերի աջակցությամբ Մեծ Թուրանի ճանապարհը բռնելու Թուրքիայի մտադրությունը:

Ավելին՝ ռուս-ամերիկյան վերջին բանակցությունների արդյունքները ցույց են տալիս, որ աստիճանաբար առարկայանում է նաև Ռուսաստանում իշխանության խաղաղ ու անցնցում փոխանցման սցենարը, ուստիև գունավոր հեղափոխության բեմականացման կարիքն անգամ չի զգացվի՝ ռուսական արջին Եվրասիայի գլոբալ վերաձևման հարվածային ուժի վերածելու համար: Իսկ դա հուսատու հեռանկարներ է բացում **նոր Անտանտի** ձևավորման համատեքստում Թուրքիայի նոր բաժանման սցենարի՝ Սևր 2-ի առարկայացման համար:

Մաս երկրորդ

20.10.2020

2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի կողմից նախապես մշակված պլանով և թուրքական բանակի ու սիրիացի վարձկանների մասնակցությամբ Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնամասշտաբ ագրեսիան հայ-ադրբեջանական հին հակամարտությունը տեղափոխեց Մերձավոր-Միջին Արևելքի վերաձևման համար սկիզբ առած գլոբալ մրցապայքարի ասպարեզ:

Պատահական չէ, որ թուրք-ադրբեջանա-ահաբեկչական կոալիցիայի հարձակման հիմնական թիրախը դարձավ մերձարաքսյան հովիտը՝ Հորադիզից մինչև Զանգեզուր: Դա Ադրբեջանի բանակի ղեկավարությունն իր

ձեռքը վերցրած Թուրքիայի ընտրությունն էր, ինչը նախապես համաձայնեցված էր Իսրայելի և արևմտյան որոշակի շրջանակների հետ: Իսկ հարձակման ժամկետների ընտրությունը պայմանավորված էր մինչև ԱՄՆ նախագահական ընտրապայքարի ավարտն ընկած ժամանակային պատուհանն օգտագործելու նպատակադրմամբ: Ցանկանալով Հարավային Կովկասը վերածել Սիրիայի՝ Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանը փորձեց անելանելի վիճակի մեջ դնել իր հին գործընկերոջը՝ «սային Փութինին», և նրան հակաարևմտյան նոր գործարք կամ Լենին-Աթաթուրք-2 առաջարկելով՝ փակել նախքան 2021 թ. մարտի 16-ը սպասվող «ծանր խոսակցությունը»: Բայց վերջինս, արտաքուստ չեզոքություն պահպանելով, կարողացավ ժամանակ շահել, անշուշտ, Թուրքիայի հետ հակամարտության մեջ հայտնված Հայաստանի արյունաքամության հաշվին: Ի վերջո, պատերազմի սկզբում Բաքվի ձեռք բերած ռազմատեխնիկական գերակշռությունն ապահովվել էր Ադրբեջան գործուղված Թուրքիայի պաշտպանության նախարար Հուլուսի Աքարի կողմից, իսկ ահա անհավասար դիմակայության մեջ հայտնված Հայաստանի ու Արցախի ռազմական մատակարարումներն ապահովողը Ռուսաստանն էր և է:

Բայց պատերազմի հենց առաջին օրերին ինչպես տարածաշրջանային հակամարտության հիմնական կողմերի, այնպես էլ նրանց արևմտյան գործընկերների ու Իրանի պահվածքը ցույց տվեց, որ Ռ. Էրդողանը սխալվել է իր հաշվարկներում: Քանզի իր ծանր զինտեխնիկայի մոտ կեսը կորցրած Ադրբեջանը բուն Արցախում ոչ միայն չկարողացավ հասնել ռազմավարական ձեռքման, այլև Թուրքիայի պատճառով հայտնվեց միջազգային մեկուսացման մեջ, իսկ ցեղասպանության վտանգի առջև հայտնված արցախահայության թիկունքին կանգնած Հայաստանը միջազգային հանրության համար վերածվեց հակաէրդողանյան պայքարի դրոշի, որը շուտով կարող է ներկվել քաղաքակրթական գունավորմամբ: Ստացվում է, որ համատեղ ուժերով «Ղարաբաղի ազատագրման» կարգախոսն իրականում ընդամենը շղարշ էր Արաքսի հովիտով դեպի Թուրան ճանապարհ բացող Թուրքիայի համար:

Իր քաղաքական հաշվարկներում սխալվեց նաև Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը, ով Հայաստանի «սորոսական դեկավարությանը» պատժելու «առաքելությունը» իրականացնելու համար նախապես չեզոքության երաշխիքներ էր ստացել Մոսկվայից: Բայց Ռ. Էրդողանի իրական նկրտումների առարկայացմանը զուգընթաց՝ ՀԱԳԿ անդամ Հայաստանին չդիպչելու, իսկ Արցախում մինչև «Վ. Պուտինի գանգը» առաջ շարժվելու նախնական համաձայնությունը ձախողվեց: Ակնհայտ դարձավ, որ նման եղանակով Հայաստանում իշխանա-

փոխություն իրականացնելու, իսկ Արցախում մի քանի շրջան զավթելու երկ-
կողմ նպատակադրումները **երկրորդական են** Ադրբեջանում Թուրքիայի հե-
տագա ամրապնդման գործընթացի համեմատ: Ուստի Թուրքիայի ու Ռուսաս-
տանի միջև խաղալով և Մոսկվային հիմարացնելով Արցախում հայերին խեղ-
դելու ժամանակավոր հնարավորությունն օգտագործելու Բաքվի հաշվարկը
սխալ դուրս եկավ:

Չնայած տարածքային որոշակի կորուստներին՝ Արցախը դիմակայեց
թուրք-ադրբեջանա-ահաբեկչական կոալիցիայի հարձակմանը՝ պահպանե-
լով իր ամուր միջուկը և մայր հայրենիքի հետ անխափան կապը: Ավելին՝
Վրաստանով ինտենսիվորեն իրականացված թուրքական ու իսրայելական
մատակարարումները և ռազմական գործողություններին սիրիական ահա-
բեկիչների, գորշ գայլերի ու թուրքական բանակի սպաների ուղղակի մաս-
նակցությունը Ռուսաստանի համար ակնհայտ դարձրին, որ տարածաշրջա-
նում ուժերի փխրուն հավասարակշռության կորստյան վտանգավոր հե-
տևանքները կանխելու համար կա երկու տարբերակ՝ զինադադարի շուտա-
փույթ հաստատումը կամ պատերազմի ընդլայնումը, որին ինքը **չի կարող
չմասնակցել**:

Ուստի 2020 թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի ու Ադրբեջանի արտ-
գործնախարարներին Մոսկվա հրավիրելով մարդասիրական հրադադար
հաստատելու իր անհաջող փորձից հետո՝ հոկտեմբերի կեսերից, Ռուսաս-
տանը Թուրքիայի ու Ադրբեջանի հանդեպ դիմեց ռազմաքաղաքական ներ-
գործության կոնկրետ քայլերի: Իսկ հոկտեմբերի 18-ի առավոտյան Ադրբե-
ջանի կողմից հրադադարը երկրորդ անգամ խախտվելուց հետո գումար-
ված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստը վերջնականապես որդեգրեց
ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կոնսուլիդացված դիրքորո-
շումը: Սա նշանակում է, որ իր համառ դիմադրության շնորհիվ հայկական
կողմը կանխեց տարածաշրջանում Լենին-Աթաթուրք նոր գործարքի հավա-
նականությունը: Ավելին՝ Ռուսաստան-Ֆրանսիա-ԱՄՆ ձևաչափը դիվանա-
գիտական հարթությունից դուրս մղեց Թուրքիային ու նրա անմիջական
դաշնակիցներին: Այսինքն՝ Ղարաբաղի հարցը գերուժերի դիմակայության
ասպարեզից տեղափոխվեց նրանց համագործակցության հարթություն, ո-
րում տեղ չունեն Թուրքիայի, Ուկրաինայի կամ Պակիստանի նման երկրնե-
րը: Անգամ Ադրբեջանի անօդաչուների հիմնական մատակարար Իսրայելը,
որը ցանկանում է Իրանին սահմանակից գոտին վերածել հետագա պատե-
րազմների պլանգրամի, սկսեց զգուշանալ թուրքական ծավալապաշտու-
թյունից և որոշակի հեռավորություն պահել Ռ. Էրդողանից:

Սա վկայում է այն մասին, որ պատերազմում հաջողության հասնելու
համար անհրաժեշտ աշխարհառազմավարական խաղաքարտերն անցնում
են մեր ձեռքը: Բայց երբ ժամանակն աշխատում է մեր օգտին, ինչ-որ մի

հանգրվանում անխուսափելի է դառնում ժամանակավոր հրադադարի հաստատումն ու բանակցային գործընթացի վերսկսումը: Ուստի Ադրբեջանի ձախողված բլից-կրիզը հետ մղելուց հետո առաջ է գալիս սեփական շնչառությունը վերականգնելու և պատերազմի **երկրորդ փուլին** նախապատրաստվելու հրամայականը: Իսկ այդ երկրորդ փուլն անխուսափելի է, որովհետև մինչ այդ պետք է հստականա այն հարցը, թե ով է կարգի հրավիրելու Թուրանի ձանապարհը բացելու համար տարածաշրջանը պատերազմական թատերաբեմի վերածող Ռ. Էրդողանին:

Ռուսաստանում սպասում են, որ Արևմուտքում ավարտվի Ռ. Էրդողանի դեմնացման գործընթացը, և որպես դրա արդյունք՝ ռուսական արջին տրվի թուրքական գորշ գալիին պատժողի իրավասությունը: Քանզի ուժասպառվող կողմերին ժամանակավոր հրադադար պարտադրելու հեռանկարը ամենևին էլ չի կանխելու ո՛չ Ադրբեջանի հետագա թուրքացման և ո՛չ էլ Ռ. Էրդողանի ծավալապաշտական ծրագրերի առարկայացման գործընթացը: Իսկ սա վկայում է, որ պատերազմի սկզբում աշխարհաքաղաքական փոխբացատող ազդակների արանքում ձգնվելու վտանգի առջև հայտնված Հայաստանն ու Արցախը **հայ զինվորի անօրինակ սխրանքի շնորհիվ** հաղթահարել են աշխարհաքաղաքական անբարենպաստ կացությունից բխող հիմնական մարտահրավերները: Ուստի ինչ գնով էլ լինի, պետք է դիմանանք մինչև ռազմաքաղաքական հաշվեկշռի վերջնական փոփոխությունը, որի անխուսափելիությունը կանխատեսել էինք պատերազմից մեկ շաբաթ առաջ գրված սույն **խմբագրականի** առաջին մասում: Այն է՝ «**մեր սեղմված մարմինը գլորբալ խաղի այն պրկված զսպանակն է, որի դիմադրական հնարավորությունների գործարկման պարագայում Թուրքիան ու Ադրբեջանը չեն կարող մեզ կոտրել, եթե անգամ ոչնչացնեն Հայաստանի բնակչության մի մասը: Գլորբալ խաղից դուրս չգալու պարագայում Հայաստանը հաղթելու է ցանկացած տարբերակում՝ կանխելով ինչպես Լենին-Աթաթուրք նոր գործարքի հավանականությունը, այնպես էլ արևմտյան որոշակի ուժերի աջակցությամբ Մեծ Թուրանի ձանապարհը բռնելու Թուրքիայի մտադրությունը**»:

Նման հեռանկարի մասին արդեն ակնարկում են նաև արևմտյան վերլուծաբանները. «Մոսկվայի ու Վաշինգտոնի միջև լուռ համաձայնության պարագայում այս պատերազմը դիվանագիտորեն կարող է շրջվել նախագահ Էրդողանի դեմ, որը երկու տերությունների համար էլ անտանելի է դարձել»¹: Ուստի մինչ թուրք-ադրբեջանական բանակը հարավից մոտենում է Ջանգեզուրի սահմաններին, այստեղ նրա առաջխաղացման ձանապարհը փակած հայ-ռուս-

¹ Voltairenet.org.

կան խմբավորումն ու Արաքսի հովտի վրա կախված ԼՂՀ Պաշտպանության բանակը ստանում են հակահարվածի փայլուն հնարավորություններ²:

Խմբ.

ARMENIA SHOULD WIN

Edit.

АРМЕНИЯ ПОБЕДИТ

Ред.

² Այս տողերը դեռ չէին էջադրվել, երբ հակահարվածը տեղի ունեցավ: